ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

« 12 » հոկտեմբեր 2023 թ. N 156-Ա/Ի

ԽՆԱՄԱՏԱՐ ԾՆՈՂ ԴԱՌՆԱԼ ՑԱՆԿԱՑՈՂ ԱՆՁԱՆՑ ԵՎ ԽՆԱՄԱՏԱՐ ԾՆՈՂՆԵՐԻ, ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի հունիսի 13-ի N 751-Ն որոշմամբ հաստատված N 2 հավելվածի 15-րդ կետով և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 700-Լ որոշմամբ հաստատված Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կանոնադրության 18-րդ կետի 20-րդ ենթակետի պահանջներով.

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե՝

1. Հաստատել՝ խնամատար ծնող դառնալ ցանկացող անձանց և խնամատար ծնողների համար նախատեսված վերապատրաստման դասընթացի ժամանակացույցը՝ համաձայն Հավելվածի:

2. Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) «Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտ» ՊՈԱԿ-ին՝ վերապատրաստման դասընթացները կազմակերպել և անցկացնել հեռավար եղանակով՝ առաջնորդվելով ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2019 թվականի սեպտեմբերի 16-ի N 119-Ա/1 հրամանով:

3. Նախարարության տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնին՝ սույն հրամանն ուժի մեջ մտնելուց հետո մեկօրյա ժամկետում՝ դասընթացի մասին հայտարարությունը (առանց խնամատար ծնող դառնալ ցանկացող անձանց և խնամատար ծնողների անձնական տվյալները հրապարակելու), ինչպես նաև 2019 թվականի սեպտեմբերի 16-ի N 119-Ա/1 հրամանով հաստատված խնամատար ծնող

դառնալ ցանկացող անձանց և խնամատար ծնողների համար նախատեսված վերապատրաստման դասընթացների թեմաները և ուսումնական նյութերը տեղադրել Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության պաշտոնական կայքերում:

4. Նախարարության հավասար հնարավորությունների ապահովման վարչությանը՝ սույն հրամանն ուժի մեջ մտնելուց հետո մեկօրյա ժամկետում խնամատար ծնող դառնալ ցանկացող անձանց և խնամատար ծնողների ցուցակները, ինչպես նաև այդ անձանց անձնագրերի/նույնականացման քարտերի պատճենները տրամադրել «Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտ» ՊՈԱԿ-ին:

5. Նախարարության «Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտ» ՊՈԱԿ-ին՝

1) վերապատրաստման դասընթացն ավարտվելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը ներկայացնել դասընթացներն ավարտած մասնակիցների ցանկերը՝ դրանում ներառելով մասնակցի անունը, ազգանունը և անձնագրային տվյալները:

2) մինչև սույն թվականի հոկտեմբերի 27-ը՝ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն ներկայացնել հաշվետվություն անցկացված դասընթացների վերաբերյալ՝ ներառելով մասնակիցների առաջարկությունները և գոհունակության գնահատման արդյունքները:

6. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել ոլորտը համակարգող նախարարի տեղակալին:

10/12/2023

X

ՆԱՐԵԿ ՄԿՐՏՉՅԱՆ

Signed by: MKRTCHYAN NAREK 3014890804

Ն. ՄԿՐՏՉՅԱՆ

Հավելված
ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի
2023թվականի հոկտեմբերի N 156-Ա/հրամանի
12

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ԽՆԱՄԱՏԱՐ ԾՆՈՂ ԴԱՌՆԱԼ ՑԱՆԿԱՑՈՂ ԱՆՁԱՆՑ ԵՎ ԽՆԱՄԱՏԱՐ ԾՆՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑԻ

Խմբի ամարը	Խմբում ընդգրկված ունկնդիրների թիվը	Դասընթացում ընդգրկված ունկնդիրների մշտական բնակության վայրը	Դասընթացի անցկացման եղանակը	Դասընթացի անցկացման ժամկետը	Դասընթացի ծավալը
1	22	1. Տավուշի մարզ, 2 ունկնդիր 2. Լոռու մարզ, 2 ունկնդիր 3. Արմավիրի մարզ, 3 ունկնդիր 4. Արագածոտնի մարզ, 2 ունկնդիր 5. Սյունիքի մարզ, 3 ունկնդիր 6. Շիրակի մարզ, 3 ունկնդիր 7. Երևան, 3 ունկնդիր	Հեռավար	13.10.2023-20.10.2023 13:00-17:30	24 ժամ